

ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը լրացնում է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շաբքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում Հ.

- 1) դող-րոցը, Հրազդանի-կ, չ-ի, ան-
- 2) ամենա-ական, քրիստոն-ություն, երբնից-, ինչև-
- 3) հն-արան, պատն-շ, չ-ինք, առ- ջարել
- 4) եղ-րերգ, ափ-ափ, չ-նք, լայն- կրան

2

Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում Ղ.

- 1) հար-արել, նշ-արենի, ար-արե, զար-ուղի
- 2) Ալվար-, գր-նակ, անդա-րում, միջնարեր-
- 3) կորնթար-, Բաղդա-, հար-աշաղախ, լաջվար-
- 4) ար-ուկ, Վր-անես, անհողող-, եր-վյալ

3

Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում Խ.

- 1) Նապոլ-ն, ուադ-, ակորդ-ն, արդ-ք
- 2) ամբ-ն, թ-րեմ, միլ-ն, Տոկ-
- 3) լեզ-ն, Բյուզանդ-ն, գիլ-տին, մարմար-ն
- 4) բրաբ-ն, հետ-տն, մեղալ-ն, տրիլ-ն

4

Ո՞ր շաբքում ուղղագրական սխալ կա.

- 1) Գևորգ, Եղեգնուտ, Եղիպտական, իգական
- 2) ագևոր, դեգերել, հոգերույժ, շրջագայել
- 3) նվազարկիչ, թանգարան, պատարաքիչ, գրգամոլ
- 4) արգավանդ, գեղգեղալ, զանգրահեր, զորգավաճառ

5

Ո՞ր շաբքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **հեքանոսական** - կոապաշտությանը վերաբերող, **արամքի** - սև ձի
- 2) **երկարաժիշտ** - երկար վիզ ունեցող, **իմովսանն** - իմ կարողացածի չափ
- 3) **հեղեճ** - հույսերի հին անունը, **սրդողել** - հոգեպահ անհանգստանալ
- 4) **բարակ** – որսկան շուն, **ործաքար** - ամուր քար

6

Ո՞ր շաբքի բոլոր բառակապակցություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:

- 1) բոցե վարսեր, լույս աչքեր, փշրված անուրջներ
- 2) ձյունագես լեռներ, անձարտար շինարար, նախասկզբնական արարչություն
- 3) թերե վիրավորանք, գրիարազարդ մատանի, խոտոր ճանապարհ
- 4) մեղքերի մրրիկ, խարխուլ մակույկ, հույսի ճրագ

7

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) մարմնեղ, թիկնեղ, հաղթանդամ, պարքևահասակ
- 2) ունեոր, մեծատուն, հարուստ, գծուծ
- 3) աստանդական, ասպճական, հյուրընկալ, վանատուր
- 4) դրացի, հարևան, կողակից, դրկից

8

Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) անավարտ, հետևաբար, կիսանդրի, հանդիպակաց
- 2) հեռավոր, տարագիր, շաքարավազ, արագավազ
- 3) ժպտադեմ, բարեկամ, հուսահատ, գահավիժել
- 4) բարեկիրթ, մականուն, մակարույծ, թերակղզի

9

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1) երկրամաս, հետագիծ, հացարույս, տավղահար
- 2) հոգեբույժ, դրամատուն, շարասյուն, եզրակար
- 3) ենթաճյուղ, աստղաբույլ, նորատեսր, հողմացույց
- 4) եզրագիծ, զարդատուփ, միլիոնատեր, զուգերգ

10

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) նախահայր, ուրախություն, հավասարում, գայլաշուն
- 2) եղբայր, զարուն, դեղատուն, բազմանկյուն
- 3) ցասուն, հուշասյուն, ծանրություն, մականուն
- 4) վանահայր, մայր, սուրանկյուն, ազգանուն

11

Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդ կա:

- 1) Ուսանողներդ խորհրդանշում եք երկրի ապագան:
- 2) Խայամն ասավ իր սիրուիուն. «Ոտղ զգույշ դիր հողին»...
- 3) Աշխարհումն իմն դուն իս:
- 4) Վերջերս հանդիպեցի իմ հին ծանոթին:

12

Տրված ածականներից քանի՞սը համեմատության աստիճան չունեն.

անտանելի, թանկ, ճաղատ, առատաձեռն, սովորական, մետաքսե, հղի, նրբազգաց, համբ, բոկոտն:

- 1) վեցը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

13

Ո՞ր շարքում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:

- 1) ինչքան, որտեղ, որ, ինչպես - *հարաբերական*
- 2) այսքան, այսպես, միևնույն, մյուս - *ցուցական*
- 3) ուրիշ, այլ, որոշ, երբեք - *անորոշ*
- 4) ողջը, այնինչ, բոլորը, ամեն ոք - *որոշյալ*

14

Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:

*Աև զիշե՞ր, և հուշե՞ր, և խոհե՞ր անհամար,
Մոռացված երազմեր, շուշանմեր բառամած:*

- 1) անենթական
- 2) թերի
- 3) անվանական անդեմ
- 4) բայական անդեմ

15

Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Նա ամբողջ հարատությունը կտակել էր ոչ թե զավակների, այլ կնոջ վրա:
- 2) Նա համբերությամբ սպասում էր ամրոցը եզերող պարսպի երկաթյան դարպասներից մեկի բացվելուն:
- 3) Նա անտեղյակ էր իր դեմ նյութվող դավերին:
- 4) Նա պատրաստ էր հորից ներում խնդրելու, բայց հայրը խուսափում էր հանդիպումից:

16

Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարրերակն է ճիշտ:

Երկար հմայված, ու՝ լեռը կարդում է , ցանկանում շոյել զլուխ:

(նայել, թվալ, միտք, ճերմակել)

- 1) նայում եմ, թվում եմ, մտքերս, ճերմակող
- 2) նայել եմ, թվացել եմ, մտքում, ճերմակած
- 3) կնայեմ, կթվա, ճերմակ, մտքերով
- 4) պիտի նայեմ, կթվար, մտքերս, ճերմակ

17

Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա կա:

- 1) Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես ջրածտերը թռչում են փրփուրի վրայով:
- 2) Խրճիթն իր հիմնվելու օրից այդքան ուրախություն երթեք չեք տեսել:
- 3) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր երևում, թե սարերի ետևում ընկած գյուղի մասին քաղաքում ոչ ոք չզիտի:
- 4) Կածաները նրանց անծանոթ են ու երկյուղալի. չզիտես ինչ ձորեր են մտնում:

18

Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Մեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կիսմի նրա արյունը:

- 1) Կրկեսի անտարբեր ավազը կիսմի մեծահամբավ ցլամարտիկի արյունը, երբ նա տապալվի:
- 2) Եթե մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կիսմի նրա արյունը:
- 3) Եթե որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կիսմի նրա արյունը:
- 4) Հենց որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կիսմի նրա արյունը:

19

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Ի՞չուժով պիտի հաղթես արարեն երին, Մարզպետունի՝ իշխան. մենք կղզում ընդամենք հարյուր զինվոր ունենք, - երկյուղած հարցրեց քաջուիին:

- 1) Թագուիին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արարեն երին. նրանք կղզում ընդամենք հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուիին երկյուղած հարցրեց, թե Մարզպետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արարեն երին. նրանք կղզում ընդամենք հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուիին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արարեն երին. իրենք կղզում ընդամենք հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուիին երկյուղած հարցրեց Մարզպետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արարեն երին. իրենք կղզում ընդամենք հարյուր զինվոր ունեն:

20

Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նրա բոլոր արարքները որքան էլ անհետաքրքիր ու ձանձրալի գրավել էին ողջ դահլիճի ուշադրությունը զարմացրել բոլորին:
- 2) Մարիամը այդպես էր օրիորդի անունը անորից շիկնել էր:
- 3) Մնացինք դեմուղեն կանգնած ես ծառի տակ էի արջը քիչ հեռու:
- 4) Ես դուրս եմ գալիս մոտենում Մխիթարի քաջ սպարապետի գերեզմանին պառկում դեղնականաչ խոտերին:

21

Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Հազարյան ճեմարանն իր գոյության ընթացքում պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ, ուսուցիչներից և դասախոսներից շատերը եղել են հայեր: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդվել են Հ. Ալանդարյանը, Ս. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, այստեղ են սովորել ապագա նշանավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Գ. Դողոսյանը, Վ. Տերյանը, արվեստի և գիտության նշանավոր այլ գործիչներ:
 2. Ճեմարանում ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով, սակայն հանրակրթական առարկաներին զուգահեռ դասավանդվել են հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև մի շարք արևելյան լեզուներ՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն: Խորհրդային տարիներին այս ճեմարանի հիմքի վրա ստեղծվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտը:
 3. 1921 թվականից Հազարյան ճեմարանի շենքը ծառայել է իրեն Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն: Ներկայում այն Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն է:
 4. Հազարյան ճեմարանը հիմնադրվել է Մոսկվայում 1815 թվականին մեծահարուստ Հազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Այստեղ ընդունվում էին տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:
- 1) 3, 2, 1, 4
 - 2) 4, 2, 3, 1
 - 3) 4, 2, 1, 3
 - 4) 3, 1, 4, 2

22

Ո՞ւմ մահն է Մովսես Խորենացին ողբում՝ գրելով.

«Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ւր է այն զվարք շրումների ժամկետը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն քարյացակամ սիրողը, որ հետևողներ էր գրավում...»:

- 1) Վոամշապուհ թագավորի և Վարդան Մամիկոնյանի
- 2) Հովսեփ Պաղնացու և Հովհան Եկեղեցիացու
- 3) Կորյունի և Դավիթ Անհաղթի
- 4) Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի

23

Գրիգոր Նարեկացու ո՞ր տաղից է տրված հատվածը:

Աչքն ծովի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն,
Երկու փայլակնածն արեգակամ նման.
Ծողնի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:

- 1) «Տաղ Վարդավառի»
- 2) «Տաղ Հայտնության»
- 3) «Տաղ Հարության»
- 4) «Մեղեղի ծննդյան»

24

Ո՞րն էր Դավթի և Փոքր Սիերի մենամարտի պատճառը «Սասնա ծոեր» էպոսում («Սասունցի Դավթ» համահավաք բնագիր):

- 1) Սիերը, տեսնելով այդ աժդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ զոտեմարտելով:
- 2) Սիերին դուր չի գալիս, որ իրեն անծանոք այդ ձիավորը ճանապարհն իրեն չի զիջում:
- 3) Սիերը զայրանում է, որ մի քույսորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:
- 4) Սիերը Դավթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:

25

Հայրեններից ո՞րն է կառուցված Երկխոսության սկզբունքով:

- 1) «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ»
- 2) «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»
- 3) «Եկին ու խապար բերին»
- 4) «Երեկ ցորեկով բարով»

26

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում Աշոտ Բռնավորն իր տանը հյուրներից ո՞ւմ էր ցանկանում դավադրաբար կալանել, ինչը խափանվում է Գևորգ Մարզպետունու կողմից:

- 1) Հովհաննես կաթողիկոսին
- 2) Աշոտ Երկարին
- 3) Սահակ Սևադային
- 4) Արաս արքանդրորը

27

Որտե՞ղ են կատարվում Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլարի գործողությունները:

- 1) Գուգարքում
- 2) Լոռիում
- 3) Սյունիքում
- 4) Զավախսում

28

Խոսքերից ո՞րը Լտան Շանթի «Հին աստվածներ» դրամայի որ հերոսինն է:

- ա. «Իմ կյանքիս գորշ երկնքում դուն ես եղեք
ինձի համար լույսի աստղը, ապրելու
իմաստը, առանց այդ լույսին, առանց այդ
միսիթարության ես զգիտեմ՝ ինչու էի
ապրելու»:
1. Արեղա
2. Իշխանուիի
3. Վանահայր
4. Սեղա

- բ. «Ի՞նչ կ'ուզես, կին, ի՞նչ կ'ուզես դուն ինձմեն:
Ամբողջ կյանքիս կեսը տառապանք տվիր
ինձի, տառապանք ու դառնություն,
ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտա-
սարդությունս, հիմա ալ մոխի՞րը քրքրել
կ'ուզես»:

- 1) ա-2, թ-3
- 2) ա-1, թ-3
- 3) ա-2, թ-1
- 4) ա-3, թ-1

29

Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ու էլ ամեն մեղքի համար սիրուս հիմա ունի մերում.
Պիտի անդարձ են հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռում...*

- 1) «Տաղ անձնական»
- 2) «Հարդագողի ճամփորդները»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Դեպի լյառը Մասիս»

30

Հատվածներից ո՞րը Համո Սահյանի որ բանաստեղծությունից է:

- ա. Ծանր նատել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,
Սոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
գ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Շակատին ձյունի պատարիկ,
Սարն ի վար քարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ...

- թ. Կախվել է ժայռը անդունիի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Զրերի մեջ են ոսքերը նրա,
Բուկ զլիսին հոգնած ամպերն են քնում:
դ. Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տար սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

1. «Մասրենի»
2. «Անունդ տալիս»
3. «Անտառում»
4. «Քարափը»

- 1) ա-3, թ-1, գ-2, դ-4
- 2) ա-4, թ-1, գ-2, դ-3
- 3) ա-1, թ-4, գ-2, դ-3
- 4) ա-4, թ-1, գ-3, դ-2

31

Տրված քանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:

1. Ծաղկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Սանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով:
2. Եվ հառաջեցին լեռները ցավից.
Անեծք ժայթքեցին հրաբուխներով,
Դարձան անդունդներ ու խորանալով
Այն սեզ լեռների տաճանքը լացին...
3. Երբ էս իին աշխարհը մտա ես տաղով, սազով-ամանչով,
- Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անձարը,- ասին:
4. Թույլ շրջուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար...
- 1) 1-ը, 2-դ, 3-ա, 4-զ
2) 1-դ, 2-զ, 3-ը, 4-ա
3) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ը
4) 1-ը, 2-դ, 3-զ, 4-ա

32

Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ամեն մաշից շատ, ամեն մաշից վեր
Սիրում է կյանքում նա իր... արոռը:
Արոռն է սիրում
Ու նրան տիրում.
Յանկացած գնով ելնում է նա վեր,
Փորձում է թռչել նա առանց թևեր,
Անվերջ սողալով առաջ է գնում...*

- 1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարք մեծաց»

33

Տրվածներից քանիսն են բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում մեծատառով.

ԱՆՆԱ-ՍԱՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՍՈՒՐԲ ԷԶՄԻՍՅԻՆ, ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ,
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ,
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ:

34

Բառերից քանիսն են հողակապով.

աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ,
ամպամած, կղզյակ, զինեզործ:

35

Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ինքը, սա, ինչքա՞ն, որոնք, քանի՞, մյուս, այստեղ, ուրիշ, ոմն, իրար, ինչու, այլ:

36

Տրվածներից քանի՞սն են անորոշ դերքայ.

Թռվուալ, կերել, խաղացել, իջել, մտմտալ, ելնել, անհանգստացրել, զարմացել, զղայնանալ, թշնամացել, գտել, դիպել:

37

Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ որ մեզ,
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,
Բուր հեզնեցին մեր կարուտները հրկեզ
Ու հեռացան: Ու ոչ մի լուր չբերին:

38

Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.

Իոզեած ամպեր, **կապույտ** մրրիկ, **սև** կրակ, **կարմիր** ծաղիկ, **խարսյաշ** քամի, **բռչող** կյանք, **զժված** քամի:

39

Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.

1. թուլամիտ,
2. կանխավճար,
3. զանգահարել,
4. երկնահուապ,
5. պտուտակ,
6. զանահարություն,
7. ճակատագիր,
8. զուգադիր,
9. կմախքանալ:

40

Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածներն իրար հոմանիշ են:

1. մատից հոտ քաշել – սիրտը վկայել
2. կապը կտրած – թուկից փախած
3. ձեռք բռնել – մատից փուշ հանել
4. ապուշ կտրել – քար կտրել

41

Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).

1. ժպտալ,
2. համարվել,
3. դնել,
4. կողոպտել,
5. նվիրվել,
6. կազմվել,
7. բղավել,
8. տրտմել,
9. ծեծկոտել:

42

Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:

Երբեմն այդ մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխսում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում են խորությամբ. ասես երեկ ես տեսել:

1. **Խորությամբ** – ձևի պարագա, **երեկ** – ժամանակի պարագա
2. **Երեմն** – ժամանակի պարագա, **մարդու** – որոշիչ
3. **հիշողության մեջ** – տեղի պարագա, **դեմք** – ենթակա
4. **այնպես** – ձևի պարագա, **մեխսում** է – բաղադրյալ ստորոգյալ
5. **տասնյակ** – որոշիչ, **ասես** – պարզ ստորոգյալ

43

Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածները չպիտի կետադրվեն:

1. Երիտասարդի ամենամեծ երազանքը Վանա լճի անկրկնելի գեղեցկությունը նորից տեսնելն էր:
2. Ցորեն տեսնելիս ճնճղուկի աչքին բակարդ չի գալիս:
3. Աշտարակի գլխից մեկն ահա ձայն է տալիս քարափը բարձրացողին:
4. Բոցերի լեզուները ընդհարվելով բնության հակառակ տարրի ջրի հետ արձակում էին դիվային քրքիջներ:
5. Նա չէր տեսնում մոխրի մեջ խաղացող երեխաներին:

44

Նշել քվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:

1. Մերթ ամաչելով պահպում էր ամպում և մերթ թրթոռուն փայլում էր պայծառ
2. Ծիածանաթիւ հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով
3. Եվ լուսինն ինչպես ջենների մատադ փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ
4. Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, չքեղ գինդերով

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Զգիտեմ տարրերակներից որևէ մեկը:

1. Որոշիչը կարող է արտահայտվել անորոշ, հարակատար, համակատար դերբայներով:
2. Որոշիչը գոյականով արտահայտված անդամի որակը, որպիսությունը, չափը արտահայտող լրացում է:
3. Որոշիչը կարող է արտահայտվել ածականով, թվականով, գոյականով և դերանվան բոլոր տեսակներով:
4. Որոշիչը կարող է լինել հետադաս և նախադաս. հետադաս որոշիչը միշտ որոշյալից անջատվում է բութով:
5. Ստորոգելին չի կարող ունենալ որոշիչ լրացում:
6. Բազմակի որոշիչները բոլոր դիրքերում որոշյալից տրոհվում են բութով:

Բ մակարդակ

46

Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Հեռվից խաղալով ու խայ—ալով (1)վազում էր սպիտակ ծին, քամին փոփի—ացնում (2) էր բաշր, և ծին լայն կր—քով (3) ճեղքում էր լեռնային օղի ալիքները: Արևը ուկ—որել (4) էր ծիու մարմար ճակատը, արծաթաձ—լ (5) ասպանդակները և պողպատյա պահուոր—ը (6): Խոզում էր՝ գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմար—նե (7) մի հեծ—լ (8) և սր—նրաց (9) արշավում էր որպես չքնաղ տեսիլք: Կապույտ քրտինքի փրփու—ը (10) նստել էր ծիու սպիտակ մորքի վրա:

- 1) 1 – տ, 2 – թ, 3 – ց, 4 – և, 5 – ույ, 6 – ց, 7 – յն, 8 – յա, 9 – –, 10 – ն
- 2) 1 – տ, 2 – ն, 3 – ծ, 4 – և, 5 – ույ, 6 – ց, 7 – ին, 8 – յա, 9 – լ, 10 – թ
- 3) 1 – թ, 2 – ն, 3 – ծ, 4 – և, 5 – ու, 6 – ց, 7 – ին, 8 – յա, 9 – լ, 10 – թ
- 4) 1 – տ, 2 – ն, 3 – ծ, 4 – եւ, 5 – ույ, 6 – ձ, 7 – ին, 8 – յա, 9 – լ, 10 – թ

47

Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկը չի շեշտվում.

- 1) որերորդ, մի խոսիր, խոսեցի, երեխանների
- 2) սառը, մանավանդ, հարց տալ, դրւատը
- 3) թանձր, վեհանձն, հարավ, խառը
- 4) նույնպես, քաղաքական, դուր գալ, տեսր

48

Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.

- 1) ՆՀԲ – 472
- 2) ՎՍԼ Գ – 3333
- 3) Ո-ՊԾԸ – 1958
- 4) ՔԶԶԸ – 9998

49

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Հովարով գլխարկն անգամ երեխային արևից չէր պաշտպանում:
- 2) Համաձայն ավանդույթի՝ նրա նախնիները ծագել են վիշապներից:
- 3) Անձրեսից հետո անցորդները գայթում էին և դժվարությամբ էին առաջ շարժվում:
- 4) Ծերունու հետնորդները սրբությամբ պահպանում էին նրա թողած մասունքները:

50

Ո՞ր տարրերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:

- 1) **արև ծագել** – բախտավոր վիճակ ստեղծվել, **ճամապարհին մնալ** – գործը անավարտ թողնել
- 2) **օծիքը բաց քրողնել** – մեկից համառորեն պահանջել մի բան անել, **օր չանցած-** առանց ժամանակ կորցնելու
- 3) **հիմ դարմանը քամուն տալ** – անցած անախորժ դեպքերը հիշեցնել, **հետին միտք** – գաղտնի դիտավորություն
- 4) **սրտից արյուն կաթել** – չափազանց դաժան լինել, **արդար յուղի տեղ ընդունել** – առանց կասկածելու հավատալ

51

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) միջնապատ – **միջին, պատ**՝ արմատներ, **ա՛**՝ հոդակապ
- 2) ճամփարաժան – **ճամփա, քաժ**՝ արմատներ, **ան'** վերջածանց
- 3) հրագանգուր – **հուր, զանգուր**՝ արմատներ, **ա՛**՝ հոդակապ
- 4) մոխրագույն – **մոխր, գույն**՝ արմատներ, **ա՛**՝ հոդակապ

52

Ո՞ր տարրերակի ընդգծված բառերն են համանուններ:

- 1) ցորենի **հաց–հաց** ուտել
- 2) **անկար** ժողովուրդ – **անկար** հագուստ
- 3) **սուր** միտք – **սուր** խոսք
- 4) մշակութային **գաճճ** – թաքցրած **գաճճ**

53

Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Գիբորդ ուզում էր քնե՛լ, քնե՛լ, բայց լույսն արդեն բացվել էր, ու սարյակները ճռվողում էին:
- 2) Զիերից մեկի առաջ խոտ էր լցված, մյուսի առաջ՝ հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից:
- 3) Պապը փնտրեց ձեռնափայտը, շփոթվեց, չտեսավ ձեռնափայտը ոտքի մոտ դրած և ոչ էլ սպասեց՝ մենք իրեն տանք. գայթելով գնաց:
- 4) Զիերի բազմության մեջ քուռակն իր մորն էր կորցրել և վազվում էր ու կանչում՝ բարակ վրնջալով:

54

Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղճական եղանակի:

- 1) կատարի, դառնանք, չկարդային, խնդրեմ
- 2) չխնդրեի, հուսահատվենք, խոսի, մոտեցրի
- 3) լինեմ, տեսնեի, կայինք, չխոնարհվեն
- 4) հուսանք, չեմ ասի, չզան, չերգեին

55

Ո՞ր նախադասության մեջ **հետո-Շ** մակրայ չէ:

- 1) -Դու հետո՝ արի. զբաղված եմ հիմա, - խնդրեցի նրան:
- 2) Քեզնից հետո կանգնած մարդը տարօրինակ տեսք ուներ:
- 3) Հետո նա սկսեց պատմել իր տպավորությունների մասին:
- 4) Արածի ու չարածի համար հետո պետք չէ արդարանալ:

56

Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ծակատագրական իրավիճակներում մարդու վարքագիծը անշուշտ այլ է լինում:
- 2) **Հենց** ի՞նձ էիր ուզում բոլորի առաջ նկատողության արժանացնել:
- 3) Խնդրի լուծման **այլ** տարբերակների քննարկման վրա այսօր ժամանակ չենք ծախսելու:
- 4) **Հենց** քեզ նկատեն հակառակորդի դիրքերից խսկույն ազդանշան կտաս:

57

Բացառական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

*Եվ հառաջեցին լեռները ցավից,
Անեծք ժայթեցին հրաբուխներով:*

- 1) վերաբերության անուղղակի խնդիր
- 2) ներգործող անուղղակի խնդիր
- 3) անջատման անուղղակի խնդիր
- 4) պատճառի պարագա

58

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:

- 1) *Աղջիկը սեղմել էր ձրբագիծ շրբունքները, որ բարցներ դրանց հուզարարավ թրիոր:*
Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրբունքները՝ բարցնելու համար դրանց հուզարարավ թրիոր:
- 2) *Ակամա սկսում ես հաշվել այն տարիները, որ ապրել ես հարազատներից հեռու:*
Ակամա սկսում ես հաշվել հարազատներից հեռու ապրածդ տարիները:
- 3) *Երբ իին արկղերի մեջ ինչ-որ զիրք է ի փնտրում, հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:*
Հին արկղերի մեջ ինչ-որ զիրք փնտրելիս հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:
- 4) *Հրաժեշտի պահին, որպեսզի բարցնեմաշքերիս մեջ լճացող արցունքները բարցնելով, նետվեցի մորս զիրկը:*
Հրաժեշտի պահին, աշքերիս մեջ լճացող արցունքները բարցնելով, նետվեցի մորս զիրկը:

59

Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):

- | | |
|--|------------------------|
| 1. Զորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն: | ա. որոշիչ |
| 2. Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում: | բ. վերաբերության խնդիր |
| 3. Փոքր-ինչ հետո նա դեմ առավ իրերի կույտի, որ բաղկացած էր իին փամփուշտներից, քայլայված դաշույններից, թրերից: | գ. հանգման խնդիր |
| 4. Դուռ, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մենության: | դ. ենթակա |
| | ե. բացահայտիչ |
-
- 1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
 - 2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
 - 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
 - 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե

60

Ո՞ր դերքայը նախադասության մեջ չի կարող կիրառվել որպես որոշիչ:

- 1) ենթակայականը
- 2) հարակատարը
- 3) համակատարը
- 4) անորոշը

61

Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Գիտեր՝ ուրիշ ճամփա չկար. միմիայն տանջանքների միջով անցնելով էր այրումին փրկվելու:
- 2) Թուղթը գրված է, և ինչ որ գրված է՝ չի ջնջվի:
- 3) Սի պահ Ասոմբ կարկանդեց (անակնկալ էր ամեն ինչ) և անկարող եղավ միանգամից ըմբռնել՝ ինչ կատարվեց:
- 4) Երբ ձիավորն ընկապ, Արծվին նետվեց նրա վրա՝ իմանալու՝ ով էր:

62

Գրական ո՞ր ժանրի բնութագրումն է հետևյալը՝

Իրականությունը պատկերվում է այլարանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի, առարկաների միջոցով:

- 1) պոեմի
- 2) բալլարի
- 3) առակի
- 4) պատմվածքի

63

Ո՞ր շարքում սիյուռքահայ հեղինակ չկա:

- 1) Գրիգոր Չոհրապ, Նար-Դոս, Սիլվա Կապուտիկյան
- 2) Սիամանթոն, Հակոբ Մնձուրի, Սիսաք Մեծարենց
- 3) Դանիել Վարուժան, Կոստան Զարյան, Պետրոս Դուրյան
- 4) Վազգեն Շուշանյան, Սիսաք Մեծարենց, Ռազմիկ Դավոյան

64

Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.

հանգուցյալ, ժողովածու, մրցույթ, պատանեկան, սառցաշերտ, թախծախառն, լիտրուկես, վարչական, դիակիզարան, ահազնացայտ, վերստին, հայրենադարձ:

65

Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.

հանգավորում, բաղաձայնույթ, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն:

Սոսավում է ու սիրով սարս է ելնում իմ սոսին,
Սոսին՝ իմ սեզ հարսի պես՝
Լուսնի ոսկե կուժն ուսին...

66

Եղիշե Չարենցի նշված ստեղծագործություններից քանի՞սն են պոեմներ.

«Դանթեական առասպել», «Հեռացումի խոսքեր», «Սոմա», «Գանգրահեր տղան», «Դեպի լյառը Մասիս», «Հարդագողի ճամփորդները», «Ամբոխները խելագարված», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»:

67

Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.

1. համառոտ,
2. ներքուստ,
3. հակիրճ,
4. նախկին,
5. անկշռադատ,
6. խելամիտ:

68

Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Նույն վայրկյանին ներս մտան երկու մուր պատկերներ՝ զիշերային ոգիների նման լուր, հապճեաւ զրկեցին ճերմակ տեսիլն ու քացան նրա հետ:

1. **քացան** – ա խոնարհման բայ, սոսկածանցավոր, **հետ** – մակրայ
2. **նույն** – ցուցական դերանուն, **վայրկյանին** – գոյական, **ի** հոլովում
3. **ներս մտան** – հարադիր բայ, չեզոք սեռ, **նրա** – դերանուն, սեռական հոլով
4. **նման** – ածական, **ոգիներ** – հասարակ գոյական, **ու** արտաքին հոլովում
5. **հապճեաւ** – ձևի մակրայ, **զրկեցին** – պարզ ժամանակածև, անցյալ կատարյալ

69

Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված անդամի պաշտոնը սխալ է նշված:

1. **Այծյամի պես** մի աղջիկ անդադար խոսում է ու խոսում: (*ձևի պարագա*)
2. **Եվ** նորից խորհում է տիեզերքի **մեծության մասին**: (*ուղիղ խնդիր*)
3. **Ամռան մի օր՝ լճից վերադառնալիս**, երկու հոգի ծեծել էին նրան: (*ժամանակի պարագա*)
4. **Աննկարագրելի** է այն զգացումը, որ ստացա այդ **հայացքից**: (*անջատման խնդիր*)
5. **Կարոտով նայում** էր իր վաղեմի **քնակարանին**: (*հանգման խնդիր*)
6. **Քընապետի խորիրդով** նա որդուն տարավ աստվածների դուռը: (*հիմունքի պարագա*)

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրիք միշտ է, Սխալ է, Չգիտեմ տարրերակներից որևէ մեկը:

1. Բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչում կարող է հարաբերյալ լինել:
2. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները կարող են միանալ ոչ միայն շաղկապներով կամ հարաբերական դերանուններով, այլև առանց դրանց:
3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են լինել կամ համադասական, կամ ստորադասական հարաբերության մեջ:
4. Սիևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՝ համադասությամբ, և՝ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
5. Բարդ համադասական նախադասությունները բաղկացած են համադաս նախադասություններից, որոնք միշտ միմյանց հետ կապակցվում են համադասական շաղկապներով:
6. Համադաս նախադասությունները միշտ ունենում են իրենց առանձին գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը: